ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 75

ք. Երևան 17 .08.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև 04.05.2023թ. կնքվել է N ՓՊՄԱՊՁԲ-23-7/42-2 գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագիր կնքելու միջոցով: Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 06.07.2023թ. վերոնշյալ մասնակցին սահմանված կարգով ծանուցվել է համաձայնագիր կնքելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը չի կնքել համաձայնագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումը չի փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով:

Հիմք ընդունելով վերոնշյալ Պայմանագրի 8.14 կետը ՀՀ պաշտպանության նախարարությունը **2023թ. օգոստոսի 4-ին** միակողմանի լուծել է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները, որոշում եմ՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ